[illegible]

1456-ДZ

392
Ե-86
4814-Ա.Հ.

# ՃՇՄԱՐԻՏ

# ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՍՆ ՏԻԿՆԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ՅԱՆԳՂԻԱԿԱՆԷՆ

ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏԻՉ ՅՈՎՀԱՆ

ԱՇԱԿԵՐՏ ՍՐԲՈՅՆ ՍԱՆԴԻԽՏՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ի ԿԱԼԿԱԹԱ

1850

4814-[illegible]

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна

37325-67

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս փոքրիկ առձեռն հատորիկ նուիրի հասարակաց 'ի ձև իմն իմաստասիրական վճռոց, որոց մէն մի պարունակեն զխրատ ինչ՝ զոր հաւատամ վերծանին և 'ի մտի պահին զիւրագոյն ևս քան զբազմաշխատ ճառս վարուց՝ որով հեղեղի հասարակն․ Գրին Սուիֆտ ասէ, թէ “Հիմն բարի վարուց իցէ հասարակաց հանճար և ազնիւ ճաշակն․” և շինուածն կառուցանի վերբերութեամբ երկոցուն ևս 'ի կարգաւոր դէպս կենաց․ Առաջի աչաց ունելով զայս, և փորձիւ իսկ ստուգելով առ 'ի լոյս ընծայեցի զայս համառօտ հատորիկ, որ յուսամ, անընդունակ չէ լինելոց յիմոց սիրուն վերծանողաց․

# ՃՇՄԱՐԻՏ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ
# ՎԱՍՆ ՏԻԿՆԱՑ

---

## Ա

### Ցանձնարարութիւնք և Ողջունատրութիւնք

ԵՐԲԷՔ մի՛ ածեր զանձինս ՚ի ծանօթութիւն միմեանց՝ առանց գիտութեան թէ ընդունելի լինելո՞ց է երկոցունց կողմանց ևս՝ թէ ոչ ։ Երբեմն Ճշկրտի այս առանց տեսակի ինչ հարցման . մեծ մտերմութիւն և գիտութիւն ուրաքանչիւր կողման բաւական հաւաստիք լինի հաճոյական ընծայելոյ յանձնարարութեանն ։

Բ

Որպէս զի Տիկնոյք ունին զնախագահութիւն պարոնաց ։ դու ընծայեա՛ զպարոնդ առ Տիկինն , և ոչ զՏիկին ոք առ Պարոնդ ։

Գ

Յընծայելդ հանապազ մատո՛ ըզցածագոյնն առ բարձրն աստիճանաւ ։

Դ

Ծանօթութիւնն ՚ի պարու ։ դիտաւորութեամբ կաքաւելոյ՝ ոչ ստիպէ զքեզ ճանաչել զանձն այն ՚ի հրապարակի կամ՝ յո և իցէ ՚ի հասարակ տեղւոջ ։ Եթէ չիցէ յատուկ մտերմութիւն՝ այսպիսի ծանօթութիւնք ընտրելագոյն ես լինին վերջանալ ընդ պարուն ։ Պարոն՝ որ

յանհրաժեշտ բարեհամբաւութեն. գտանէր զպարման իմն ծանօթութիւն՝ եթէ փափաքէր մտերմութեան քում. և ունէր զպարտուպատշաճ մեծարանս զմարուց քոց։

## Ե

### Զգեստ և Ձև.

Թող քո զգեստն յարմարեսցի որակութեան արտաքին կերպարանաց, հասակի քում, և հանգամանաց յորում՝ և իցես։ Ա՛ան օրինակի. զգեստ վասն տաւօնեան կացրդից, — վասն զգնալոյ, — վասն հացկերութի, կամ՝ երեկոյեան ընկերութեան, երկուքանչիւր պահանջեն զզանազան ձևս. թէ ըստ նիւթոյն՝ և թէ ըստ զարդուց։

Զ

Հրաժարեաց ՚ի ծայրէ · և յոր-
դեգրել քո զեղանակ բարեկամիդ ·
զգոյշ կաց զի յարմարեսցի այն հա-
սակի քում, զունոյ, և խրանայդ ·
զդեսան որ նոր օրինակաւ յարմա-
րեալ նմա՝ անվայելուչ է քեզ :

Է

Յուսամ պարկեշտութիւն պաշտ-
պանիցէ զքեզ յընդունելոյ զայն
" չափաւոր երկայնութիւն " զգես-
տուց՝ որ ոչ շատ յառաջ քան զայս
՚ի համարի էր · և բարեբաստու-
թեամբ սովորութիւն ներկայ ժա-
մանակիս անվայելուչ համարի :

Ը

Եթէ կարճ իցէ հասակդ, հա-
ղիւ թէ յորդորանաց կարասցիս
զօդել զառաւելութիւն տանոց ՚ի

վերջաւորս հանդերձից քոց ․ և ընդ հակառակն՝ եթէ բարձրահասակ լիցես՝ գեղապատշաճ յօրինեն՝ եթէ ծէսն չարգելուցու ։

Թ

·Ընդունելինք սակաւ ինչ նըման վերջնոյն՝ առնել կարեն վասն գլխազարդուց և փոթ ՚ի փոթ վակասաց պարանոցի ։ Շատ բարձր գլխազարդ չկարէ յարմարիլ բարձրահասակ և կարճահասակ անձանց ։ Միջինն կարող է, յիրաւի, յանդգնիլ ՚ի բարձրագոյնն՝ առաւել քան թէ առաջինն ։ Անձն, որոյ լիցէ կարճ պարանոց՝ զգոյշ լիցի ՚ի տեսակէ վակասուցն զոր զգենու, եթէ իրաւ մին պիտոյ լինի համարելի, յորժամ՝ անձն երկարապարանոց կարող է բառ-

նալ զանձնանուիրութիւն տեսլեանն
խնամատնապէս յարմարելով ինքեան
զայս մանիկ զգեստուցն ։

Ժ

Մ՛ի Հաստատակ ծանօթութիւն
կարեւոր է սաստ զհետ բերել յօ-
գուտ․ Այն հիւրընկալ չպիտի զգե-
նուլ այնքան խիստ և հարուստ,
որպէս յորժամ՝ թէ իցէ հիւր ։
Լաւ ճաշակ է Տիկնոջ ոչ ցու-
ցանել զինքն ի հիճուկս հիւրոց
իւրոց՝ ճոխութեամբ զգեստուցն ։

ԺԱ

Մ՛ի անձնացոյց մնապարծիր ի
ցոյցս ակնաց քոց․ սակայն թէ ու-
նիցիս զպատուական ակն ինչ՝ յի-
շեա՛ զի զգեստ և միջակ քո ներ-
դաշնակաւորեսցին ընդ յարգանաց
նոցա․ ապա թէ ոչ՝ աշխարհ ոչ տայ

քեզ հաւատս վասն ճշմարիտ արժանեացն զոպարտէ եւ զքեզ սնապարծ չռայլութեամբ։ Եթէ հանգամանք քո ո՛չ խոստանան քեզ զայս անհրաժեշտ միաբանութիւն պանծալի զարդուց՝ չափաւորեա զնոսա ։

ԺԲ.

Մ՛ի կրեր երբէք զմիւսոնեան ոսկի կամ զհիւս անուամանդեայ՝ զի երեւեցուցիչքեն փառասիրութեան երեւելոյ որ ինչ դու ո՛չ ես, եւ առաւել եւս՝ որ ինչ դու ինքնդ ո՛չ փափաքիս լինել ։ Նոր ոմն Հեղինակ ասացեալ է թէ՝ "Տիկին՝ որ պճնի ընդօրինակութեամբ՝ պարտապան գտանի ո եւ իցէ խաբէութեան վասն բաւարարութեան ընդունայնութեան իւրոյ ։" Մեզ ո՛չ էր պարտ այսպէս խիստ լինել. բայց

յիրաւի՝ առումն նոցա երեւի փոքր ինչ նման խաբեբայութեան ։

ԺԳ

Ուրեմն թող՝ զարդարանք քո լիցին յայնժամ առաւել նշանաւորք վասն բնական արժէից իւրեանց, և վասն ճաշակացն՝ որով որոշեցանն և զանձամբ առան, քան թէ վասն շռայլութեան ։

ԺԴ

Ի մեծամեծ կոչունս մասնաւորաբար՝ մի ցուցաներ զերեւելի իմն հոգ վասն զգեստուցդ ․ և մի, եթէ որոց պատահումն հանդիպեսցի քեզ անդր, ցուցաներ զյատուկ կամ զզօրաւոր շարժումն ։ Եթէ դու այնպէս խուճապեսցես, հաստատ կայ, զի բազումք հաւատան թէ

եղեր դու զայսպ 'ի վերայ լուսագոյն մասին հանդերձից քոց ։

### ԺԵ

Յարմարեա զքօղումն գլխոյ քո կամ զձև հերաց քոց, ըստ երևութի երեսաց քոց ։ Եթէ ունիցիս զառանձինն նաժիշտ, շուտով ըստուգել կարէ թէ զինչ ձև յարմարիցի քեզ բարւոք ։ Սովին ոչ եթէ խորհուրդ տամք քեզ լինել բովանդակ առաջնորդեալ դատաստանաւ նորա ։— Ո՛ խարդ և լիցէ, եթէ յանձնեալ իցես զանձն այլանդակութեան (հոպոպեաց,) այս երևելի մասն երևութիցս, տայ նմա զկատարեալ ուղղութի՛, կամ հաստատ լեր զի առ ո՛չ ինչ համարիցի զօկզբունս ընտզննութեան, բայց միայն համեմատէ զհերս քո ընդ

վերջին բերման կոծեղաց ՚ի Պուրի-սայ ՚ի Լօնտոն, որ այնքան յարմա-րի քեզ՝ որպէս Պաւղին ՚ի Հռովմ։

ԺԶ

Ջեռնոցք պարտին միշտ յար-մարել ընդ զգեստուց քոց. և հա-գիւ թէ հարկաւոր լինի ասել թէ՝ և պարտին միշտ մաքուր լինել։ Ոչ ինչ կարէ լինել այնքան առա-ւել գռեհկական քան թէ մոյգ գու-նաւոր ձեռնոցն։ Մարգագոյնն և ճերմակն վասն երեկոյեան ընկե-րակցութեան՝ հաստատապէս առա-ւել վայելուչք են, եթէ զգեստ քո ներեսցէ զնոսին զանձամբ ըզ-գենուլ։

ԺԷ

Ընուշահատութիւնք են հար-կաւոր յաւելուածք պաճուճանաց

Տիկնոջ ։ Թող նոցա լինել զուարթարարք, այլ ո՛չ աղտուք ։ Ոգի վարդից է վայելչագոյնն. իւղ յասմիկան հոտաւէտ է միանգամայն և զուարթարար ։ Բազում՝ այլք անուանել կարեն միօրինակ յարմարեալք ։ Բայց զմտաւ ածել պարտ է՝ թէ ո՛չ և մին ՚ի նոցանէ կարէ ՚ի կիր արկանիլ ։ Օ ի են՝ որք այսպէսբունի վարին մինչ տալ զգաղափար իմն թէ չիցեն ՚ի կիր՝ իբրև զհեշտութիւն ինչ, այլ իբրև հարկաւոր ինչ ։

ԺԲ.

Որպէս ընդհանրական դիտողութիւն ինչ, մի՛ մոռանար թէ մանաւորութիւն զգեստուցն և սնապարծ զարդարանք չիցեն որ ինչ եղանակաւ նշանաւորիչք Տիկնոջ.

այլ գործածութիւն նոցա հաստա-տէ ՚ի վերին երեսս զապացոյց ընդ-դէմ կրողին թէ՝ լիցէ նոր ոմն հա-րուստ․ որ եւայ զհետ նշանաւորու-թեան ։ Կացութիւն եւ կատարե-լութիւնք վարուց տանելի առնեն զդռեհկութիւնս զայս , կամ՝ գոնէ կողմանքն տանելի եւ հաճոյական լինին ընդդէմ քան թէ վասն նոցին ։

ԺԹ․

Ծանօթութիւնք եւ Ողջունատրութիւնք ․

Յիշատակեալ եմք ՚ի չորրորդ-դիտողութեան մերում թէ ընտրե-լագոյն եւս էր քեզ չճանաչել զոք ՚ի մէջ հրապարակի՝ որում ծանօ-թացար միայն վասն պարուց ՚ի կոչունս ։ Որպէս եւ լիցէ , եթէ այս-պիսի անձն համարձակիցի ողջու-

նել զքեզ, այդ է հաստատութիւն կամ՝ տգիտութեան՝ որով համարձակիլ առ քեզ, եւ կամ՝ զի չունիս յարգանս թէ վասն համբաւոյ՝ եւ թէ վասն կացութեան քո։ Եթէ յայսպիսի մխձակի, ուրեմն ՚ի հարկէ ոչ ընդունիս զողջոյն, այլ անցանես անփոյթ, եւ թողուս զնա խորհել թէ վասն այլումէր դիտաւորեալ զայն։

Ի

Եթէ հանդիպիցես պարոնի ումեք ՚ի փողոցի՝ ընդ որում՝ ծանօթ իցես, յիշեա՛ զի քեզ անկանի ճանաչել զնա յառաջքան զհամարձակել նորա յողջոյն քո։ ՙՆերհակըն սուրբն երեւի գոլ ՚ի Ցամաքին Եւրոպայ։ Որպէս եւ իցէ, կարծեմք, զի փոքր ինչ դիտողութիւն

Հաստատէ թէ Անգղիացւոց առևտրութիւն պարունակէ առաւել ևս "Ճշմարիտ քաղաքավարութիւն" քան զնոցուն գաղղիական դրացեաց: Ամենեքեան ընդունին զի զգացմունք և հակամիտութիւնք Տիկնոջ պարիզցին առնուլ յայսպիսիս: Պարոն ոք կարէ հանդիպել նմա՝ յոր ժամ հանգամանք արտաքին զայն փափագելի ի կողմանէ յարգելուհւոյն: Եթէ չկամիցի ինքնին ճանաչել ի քէն, որպէս լինի այս իմացեալ: Աչ ողջունելով տիկնոջն զնա, պարտի համարել թէ կամ այսպէս է. զի կամ ոչ տեսեալ և կամ այլ ևս ոչ յիշատակէ զնա: Սանորոյ մեք յայսպիսի առիպման վճարեմք զառաջել նշանաւոր զանազանութիւն առ

կանայս՝ քան զմեր քաղաքավարի դրացիս ։ Գուցէ բարուք ևս լինի զխօսել որ թէ՝ և քաղաքավարութիւնն ամենևին որոշեալ է ՚ի վերայ յայսմ առարկայի ։ սակայն յաճախակի կշռի արտօնութեամբք ։ յորժամ մտերմութիւնք, հաւատարմութիւնք կացութեան և վիճակի, և ծանուցեալ արդիւնք իւրաքանչիւրոցն ապահովեսցեն զարձակութիւնն ։

ԻԱ

Այցելուք և Այցելութիւնք ։

Յարմար ժամանակն վասն առաւօտեան այցելութեան ՚ի ծիսական աշխարհի՝ է ՚ի մէջ երկուց և հինգ ժամուց ։ Այլ են բազում բարձրապատիւ և արժանաւոր անձինք՝ որ ՚ի կարգս ժամանակի իւրեանց՝

մերձենան այնմ, որ ընդունելի եղև ՚ի բարեփառ Տիկնոջէն Բէսայ :" Սիրեմ անվայելուչ լինի զանձն ՚ի ներքս սպրդել յետ միոյ ժամու զկնի միջօրէի, եթէ այցելութիւն ոչ յապաղէր ցկէս-անց յերից կամ չորից : Գիտութիւն սովորութե մերձաւորաց քոց պարտ է ուրեմն հաստատել զառաւել յարմար ժամանակն :

ԻԲ

Յառնել քում զառաւօտեան կոչումն, մի տարածեր զտեւումն նոցին առաւել քան թէ զքառորդ ժամու կամ քսան վայրկենից, եթէ չիցէ այցելութիւն քո առ մտերիմ բարեկամօք. որ հաւաստի ես թէ փափաքի երկարել այնմիկ ցլի տարածութիւն յաջողակութեան քո :

37325-67

ԻԳ

Յընդունել քո զառաւօտեան այ-
ցելութիւնս, ՚ի բաց թող զոր և իցէ
գործ՝ զորովք զբաղեալն իցես ։
Այս միայն յարմարէ զքեզ լինել
զփոքրիկ ակնածութիւնս զայնոսիկ.
և ասել զայն վայելուչ և զպարտու-
պատշաճ ոչ-ինչս՝ որք առնեն ընդ-
հիւրս քո առ ժամայն մտերիմս. և
ձգեն զհաստատութիւն համբաւոյ
քում յանձն կարգաւորի ։ Յոր-
ժամ այցելուք քո յառնեն երթալ.
հար զզանգակն վասն ծառայի քում
՚ի բանալ զդուռն բակին ։

ԻԴ

Որպէս կին հիւրընկալ՝ զմտաւ
ած թէ ՚ի մտադրութեան քում,
պարտիս համարել զամենայն հիւրս
քո համեմատ ։ Եթէ որոք զանա-



Гос. Библиотека

դանութիւն առնել յարմար իցէ , թող այնմ լինել ՚ի շնորհս մեծագոյն օտարականին , կամ փոքրիկ աստիճանաւոր անձին . Եթէ դրութիւն առաջնոյն լիցի վերագոյն , թող վերջնոյն ունել զօգուտ մասնաւոր մատուցութեան քո . զի Պարոնն կամ Տիկինն չզգանայցեն զցածութիւն երկաքանչիւր վիճակացն .

ԻԵ

Արհեստ ընդունելոյ զմիկեր՝ կարէ միայն դաստիարակութեամբ՝ փորձառութեամբ և մերձաւոր դիտողութեամբ լինել . Եթէ չունէցիս զառաւելութիւնս երկուց առաջնոցն , խկայն յօգուտ յիշեա՛ զվերջինն , Կարողութիւն խնայութեան և յարմարութեան առաւելագէս ստացեալ լինի ՚ի սեռէն ան-

ոլի քումմէ ։ Վասն այսորիկ փու-
թով սահմանեա՝ եթէ ունիցիս զմտա-
ածութիւն դէպ ՚ի լաւ ընկերակցու-
թիւն ։ Ու ՚ի չգոյէ երկոցունց ա-
ռաջնոցն՝ զլաւ զաղափար իբրև յան-
ձըն առնէի զդիտաւորութիւն բը-
նաւորապէս վարելոյ ։ Թողլով ըզ-
փափագ հաճոյացուցանելոյդ լինել
զլխաւոր սկիզբն քո ։ Վարեա հան-
գարտութեամբ , մի՛ լինիր շուտա-
փոյթ ։ և եթէ կրթութիւն քո չիցէ
իսպառ զանց արարեալ , եթէ չիցէ
լեալ քո ժամ՝ գիտելոյ՝ դու ընդ-
հանրապէս ուղղութեամբ վարեաց ։
Եւ թէ գուցէ առանց կեղծեաց որոք
թեթև վրիպակ ՚ի հասարակ կար-
գէ ։ բազում անգամ տրի այն չա-
փազանցութեան քան թէ կարօտու-
թեան գիտութեանդ ։

ԻԶ

Եթէ յառնել քո զառաւօտեան կոչունս ինչ , կամ ՚ի պարծուցանել զայցելութիւն՝ կողմանքն չիցեն "՚ի տան" թող զքարտ քո ։ Եթէ կոչն գիտաւորեալ իցէ առաւել քան թէ միումն ՚ի գերդաստանէն , անկիւն կամ անկիւնք քարտին ծալեսցին։ Եթէ մայր կամ դստերք առնիցեն զկոչն , անուն կամ անուանք դըստերացն որ եկեալ իցեն՝ մակագրեսցի ՚ի քարտի մօրն ։

ԻԷ

Եթէ որոք անդամ գերդաստանի՝ ընդ որում սովորութիւն այցելութեն ունիս՝ մեռանիցի , անձամբ ոչ գնասցես ՚ի ցաւակցութիւն . բայց միայն թողցես զքարտ քո ։ Յետ ընդունելոյ զքարտն շնորհա-

ճալութեան, ապա արասցես զայցելութիւնս քո ։ Որպէս և իցէ՝ թէ յայսմիկ, և թէ յայլ բազում պատեհութիւնս, քաղաքավարութեան մարթ է փոփոխել ՚ի դէպս ըստ հանգամանաց ։

ԻԸ

Պարտք շնորհակալութեան մի՛ ելցեն մինչև ցայն ժամանակն, երբ դու լինես բաւականապէս հադարտացեալ, և զգացմունք քո բաւականապէս նուաճեալ յընդունել զայցելութիւնս ։

ԻԹ

Ճաշ՝, հացկերոյթ, կոչունք, պատասխանիք հրաւիրանաց հացկերութից պարտին կարգաւ ուղղել առ Տիկինն ։ Պարտք հրաւիրա-

նայն սովորաբար առաքին իւրե-
հնդաստան աւուրբք յառաջ քան
զկոչումն ։ Յարմար թէ վասն
այսպիսի ընկերակցութեան փոքր
ինչ ընդ վիճով է ։ Յու թէ մինչեւ
ցերկրատանեսքն երեւին առաւել
պատշաճագոյնք ։ Մերջին վայել-
չագոյն թուին կարէ լինել Տանն ։

Է

Յառաջագոյն դիտեցաք ի վե-
րայ Հարկին ծանօթացուցանելոյ
զանձինս փոփոխակի յանկութեամբ
և հաւանութեամբ միայն ։ Նստուստ
որովհետեւ մարդիկ հարկաւորապէս
ծանօթացուցանին միմեանց ըն-
կերակցութեան ճաշուն , միայն
այսպիսիք հրաւիրեսցին՝ որք ծա-
նօթք իցեն միմեանց . կամ որ փո-
փոխակի հաճոյին ծանօթանալ ի-

րերաց ․ բաց ՚ի հանգամանաց անտի՝ զորոց յառաջն ասացաք ։

ԼԱ

Յորժամ զհրաւէր իմն ընկալեալ իցես , մի՛ թողուր ո և իցէ հրամայողական հարկաւորութե պարտաւորել զքեզ ՚ի բեկանել զյանձնառութիւնդ , կամ ՚ի վերջնումն կէտի առաջքել զպատասխանիդ ։

ԼԲ

Ճիշդ լեր ժամանակի հաստատելոյ ։ Սովորական անմտադրութիւն յայսմ մասնաւորի՝ է յիրաւի նշան տգիտութեան և յանդգնութե ։

ԼԳ

Հիւրընկալուչ Տիկինն զհետ երթայ հիւրոց իւրոց ՚ի ճաշատունն , հիւրընկալուչ պարտին առաջնորդելով տիկնոջն՝ որ առաւել հա-

մարման լցէ արժանի ։ Պարոն ումն ՚ի բարձրագոյն աստիճանի՝ ընկերէ տանտիկնոջն ։

ԼԴ

Հիւրընկալուչ տիկինն առնու զգլուխ սեղանոյն ։ Պատուաւոր նստարան պարոնին է ընդ յաջմէ տանտիկնոջն․ իսկ տիկնոջն՝ յաջմէ տանուտեառնն ։

ԼԵ

Յերեւելիս տանց՝ գործողութիւն յօշելոյն կատարի ՚ի վերայ եզրասեղանոց․ (այսինքն, գլխաւոր յօշուածոյն, կամ որոց պահանջեն ճկարողութիւն յառնելն զայն ։)

ԼԶ

Ընձեռնոցք սեղանոյ անհրաժեշտք են ՚ի ճաշուն, և արծաթի պատառաքաղք հասարակք այժմ

գրեթէ յամենայն տունս պատուականաց . թէ ըստ ձեւոց, և թէ ըստ բնութեան հրահալելոյն՝ որ ոչ լուծանի հասարակ թթուօք սեղանոյ՝ շատ ցակալիք են ։ Պողպատեայ պատառաքաղք, եթէ ոչ վասն յօշելոյ, այժմ՛ ոչ երբէք դնին ՚ի վերայ սեղանոյ ։

ԼԷ

Տիկնայք մի պահիցեն զձեռնոցս ՚ի ժամու ճաշուն ։

ԼԸ

Երբ ընկերութիւնն ժողովի՝ սովորական հիւրընկալու տանտիկնոջ և տանուտեառնն է՝ նշանաւորել պարոնաց զտիկնայս՝ զորս նոքա առաջնորդելոց իցեն ՚ի ճաշատունն . ըստ առաւել իսկական կամ երևակայական գաղափարի հասակի կամ

աստիճանի ։ Եթէ աստիճանաւոր անձինք ներկայ լինին , ՛ի հարկէ՝ ցանկալի լինի և առաւել սովորական տալ նոցա զառաջնութիւնն ։ Եթէ այսպիսի անձինք ոչ լինին ներկայ . կարես ընդունել կամ մերժել ։ Որպէս և լիցէ . հարկաւ մատուցանէ նա զաջ ձեռն իւր տիկնոջն , զոր համարի արժանի առաւել մեծարանաց և հորդէ զճանապարհն ։

ԼԹ

Զձուկն բաժանել պարտ է ձկնհատիւ ։ Կարես առաւել յաջողակութեամբ յօշել՝ եթէ առնուցուս զդրդալ մի ՛ի ձեռն քո ։

Խ

Կեր զձուկն արծաթեայ պատառաքաղաւ . որ դիւրաւ բաժանի օգ-

նուԹեամբ պատուոյ իւրեք Հայկ-
յաՀեակ ձեռին քում ։ Սուր պող-
պատեայ պատուարքաղք՝ միայն իցեն
՚ի վերայ սեղանոյ ։ ՚ի կիր առ. ղղա-
նակ և պատուարքաղն միանգամայն ։
Պատճառ պատուարքաղին ընդՀան-
րապէս ՚ի կիր առնելոյ յայժմեան
ժամանակիս է, զի այն գործի այժմ
սովորաբար արծաԹեայ է. որոյ
վերայ ԹԹուք՝ որք են Հասարակ-
օրէն ՚ի Համեմունս ձկանց՝ չունին
զզօրուԹիւն. բայց երբ միայն պող-
պատ իցէ ՚ի վերայ սեղանոյն, ցու-
ցակուԹիւնէ ինձ ՚ի կիր առնուլ
զպատուարքաղն. — և նոյն օրինակ
անպատշաճ և տխմարական ։ ԹԷ ըն-
Թու Համեմունք լուծանեն զպող-
պատն. և այսպէս ստեղծանեն զԹը-
Թուուտ ինչ երկաԹոյ, որ տայ

զկարի շատ անհաճոյ համ ձկանն ·
և այս պարագայ տուեալ է ճա-
շունն այժմեան սովորութեան ոչ
՚ի կերակրելոյ զշանակ · բայց միայն
զարծաթի պատառաքաղ՝ ՚ի բա-
ժանել զձուկնն · տես նաև զգի-
տողութիւն մեր ՚ի թիւ 45 ։

ԽԱ

Մի՛ առնուր երբէք զարգանակն
կամ զձուկն՝ առաւել քան զմիան-
գամ ։

ԽԲ

Հանապազ կերակրեա զքեզ են-
քըն պատառաքաղաւ ։ Դանակն
վարի միայն ՚ի բաժանել զմիսն · և
ըստ որում արծաթի պատառա-
քաղք այժմ ընդհանրապէս ՚ի վար
արկան ՚ի պատուական սեղանս · ըստ
երիք նախադասին դրդալացն պըտ-

ղեղինաց թէպէտեւ վերջինն վա-
րի տակաւ ին վասն կարկանդակաց,
քաղցրաւենեաց, եւ այլն։

ԽԴ

Եթէ լինիցիս ՚ի սեղանին՝ ուր
պողպատեայ պատառաքաղք միայն
իցեն զետեղեալքն՝ վարեա՛ զդանակ
եւ զպատառաքաղ յուտելդ զկար-
կանդակ, զթերթս, եւ այլն. այս
ինքն՝ եթէ չիցեն անդ դրդալք սղա-
ղեղինաց։ Պատճառ վարելոյ զար-
ծաթեայ պատառաքաղս առ ՚ի չգոյէ
դրդալացն պողնձեղինաց՝ երեւեալ է ՚ի
քանեբորդ դիտողութեան մերում՝
«Նաեւ սանլի է թէ՝ առ ՚ի չգոյէ ար-
ծաթի դրդալաց՝ նախափորձ ապա-
ցուցի՝ թէ առաւել ծխական արա-
րողութիւնք կանոնեալք ՚ի քաղա-
քավարութենէ՝ ոչ են անդ ՚ի կիրք,

հեռաւորք՝ և տխմարութիւն, եթէ ոչ և՛ բրտութիւն իսկ՝ ընդդիմել զեղանակի, որ կամ ոչ հասկացեալ. և կամ ոչ պատշաճեալ տանն, Նոյն ակնարկութիւն հայի և յուտելն զձուկն :

ԽԴ

Արգանակն ուտել պարտ է զկողմանէ, և ոչ թէ ի ծայրէ գդալին : Եւ յուտելն զայն՝ զգուշ լեր ոչ հանել զձայն, զօրութեամբ ի ներս մղելով զշունչդ : Այս անվայելութիւն յանձինս գռեհկականս է. զաւ կարես ուտել կարի շատ հանդարտութեամբ :

ԽԵ

Եթէ հարցանիցիս ի պարոնէ ումեքէ առնուլ զգինի՝ պարտիս անտես չառնել: Շատ է քեզ՝ եթէ

մրձեցուցես զկծղոյն 'ի շրթունս քո, եթէ այսպիսի հրաւէրք կարի յաճախակիք իցեն ։

ԽԶ

Ի բաժանել քոյ զարգանակին, խորհեաց․ զի փոքր ինչ առաւել քան թէ շերեփ մի լի բաւական է ։

ԽԷ

Մի ծանրաբեռներ զափսէ բարեկամաց քոց, որ երեւի շատ հիւրասէր, բայց կարի զեղջուկ ։

ԽԸ

Ի բաժանել զհամեմունս կամ զխաւարտ զետեղեալ զնոսին 'ի միոյ կողմանէ խահին յափսէի ։

ԽԹ

Որովհետեւ տան տիկին, ոչ ըն-տրեալէ հիւրոցն ուտել առաւել քան թէ երեւ իցին յօժարք, մի

մեջեր զնոսա յոր և լիցէ մասնաւոր կերակուր՝ զոր համարիս վերագոյն։ Մանն զի՛ որ ինչ յարմարիցի ճաշակաց քոյ՝ կարէ լինել միանգամայն անյարմար այլոց ։ Եթէ որոք դժուարութիւն պատահիցի ՚ի յօջերլդ, զմտաւ ած զի ո՛չ կրեցես զթիւրամտութիւն ինչ յաղաչերլդ զՊարոնն յաջմէ կամ՛ յահեկէ քո՛ օգնել քեզ. զի այն մասն է ՚ի պարտեաց նոցա և ազատութեան քո ։

Ծ

Յօգնել որոք անձին ՚ի սեղանի, զմտաւ ած. զի ուր դրդալ կարիցէ պաշտաճապես վարիլ, նախադասիլի է պատառաքաղից։

ԾԱ

Եթէ որ ինչ առաքիցի առ քեզ ՚ի տանուտերանէ կամ՛ ՚ի տիկնոջէ

նորա՝ մի՛ մատուցաներ զայն այլում ուրուք, զի այդ երեւեցուցանէ զտխուր տմարդութիւն ․ եւ երբ օգնեալ, մի՛ սպասեր մինչ միւսք եւս սպասաւորեսցին, այլ միանգամայն յարմարեա՛ց զանձեռնոցիկքո, եւ յառաջեա՛ ՚ի գործ ժամանակին ։

ԾԲ

Թող զի հացն զետեղեալ ՚ի վերայ սեղանոյ ճաշուդ՝ հատցի ըստ յարմար ստուարութեան, ասա՛ ՚ի մատնէ ցմատնաչափ մի եւ կէս ։ Փոքրիկ ըլեթքն արարեալք յերեւակայական հացագործաց ըստ հայեցղութեանցն, լաւք եւս են վասն սեղանոյ ճաշունն՝ քան զառանձինսն ։

ԾԳ.

Մեր սիրուն վերծանուհիք հաղէն թէ կարօտին խրատուց թէ՝ ոչ

իցէ արժան 'ի կիր առնուլ զքըչ-
փորիկ ատամանց 'ի սեղանս . եթէ
ո՛չ ընդ հանդամանօք բաձարձակ
հարկի :

ԾԴ

Լոգանք կամ Մատնալուայ
ապակիքն 'ի սեղան գան ընդ պըտ-
ղոց : Թա՛ց զծայր անձեռնոցիդ և
սրբեա՛ բերան քո . յետոյ սոյզ ըզ-
մատունսդ 'ի ջուր և չորացո՛ զնոսա
անձեռնոցաւդ . բայց մի՛ 'ի վերայ
որ և՛ իցէ հիման՝ յանցաւոր լիներ
տաղտկալի արարողութեան ողող-
լոյ զբերան քո . և թափելո՛յ զջուրն
'ի լոգան անդր : Հազիւ թէ հնա-
րաւոր է տիկնաց յայսմ երկրի՝ լի-
նել յանցաւոր տաղտկալի գործո-
ղութեանս այսորիկ :

ԾԵ

Մի՛ երբէք կտրեր զպտուղդ պողպատեաւ, զհատեալ նարինջն բաժանեա՛ արծաթեաւ: Երբ պողպատն գործի 'ի նարինջ անդր՝ կիտրոնական թթուն հալէ զնա, և յառաջ բերէ զկարի յոյժ անհաճոյ տտպութիւն:

ԾԶ

Որպէս տան տիկին, տացես ըզնշան վասն առանձնանալոյ՝ ելանելով 'ի սեղանոյն: Ժամանակն այսպէս առնելոյ փոփոխի ըստ զանազան ընկերակցութեան, և պարտ է՝ կալ մնալ ընտրութեան քում. զի դու ինքնին պարտիս գիտել զսովորութիւնն ընկալեալ 'ի բարեգոյն մասնէ շրջակայիցդ՝ յառաջնորդութիւն քեզ:

ԾԷ

Սուրբ կամ խաշնէք այժմ ոչ, որպէս ի նախնումն էր՝ մուծանի ի ճաշատունն անդր. բայց ընդհանրապէս պատարագի ի գանձին, յետ երկուց կամ երից ժամուց զկնի տիկնայցն Թողլոյ զսեղան ճաշուն:

ԾԸ

Նուագածութիւն.

Դիտողութիւնք ընդ այսր գլխով են ըստ մեծի մասին հանգոյն ասացելոցս յառաջին մասին՝ առ Պարանայն:

ԾԹ

Մէ՛ երբէք երևեցուցանէր զորոք մանաւոր անձկութիւնս երգելոյ կամ նուագելոյ: Ակնկցիս թերևս ընտիր ձայն, և զպայծառ արուեստական կատարելութիւնս, բայց

բարեկամք քո, կարեւոր է՝ թէ ոչ զարմանայցեն և ոչ արժեցուցանիցեն իմիք զերկուքանչիւրան ես ։

Կ

Եթէ կամիցիս երգել՝ մի ցուցաներ զչկամութիւն երբ հարցեալ, բայց միանգամայն յառաջ մատիր ։ Եթէ լսես լաւ երգիչ, պատրաստական զխնդումն քոյ առաւելու ըզհաճութիւն բարեկամաց քոց, և զմտադրութիւն․ եթէ չլսես՝ փափագ հաճեցուցանելոյդ ապացուցանի և որդահատի ։

ԿԱ

Մի՛ երգեր զերգ ինչ նկարիչ տրական կրից կամ զգայութեանց․ վատթար ճաշակէ այդ․ մանաւանդ յորժամ լցէ առատութիւն վեհա-

դոյն երգոց վասն երկոցուն սեռիցն եւ ։

ԿԲ

Եթէ երգես երկրորդաբար, մի՛ յառաջեր, և մի՛, որպէս թէ յոր-սայս քարշիցիս յետուստ 'ի կրըն-կանց ․ զի ընկերութիւն ընդհանրա-պէս վասն այսպիսի վարուց ո՛չ տայ քեզ հաւատ բարձրագոյն դատո-ղութեան ։ Վասնորոյ եթէ չնկա-տես զքո բարեկամաց հաւանութին՝ ողորմութիւն արա՛ զանէ համար-մանն անձին քում ։ Ի հաստատ լեր՝ թէ իննունք 'ի տասանց ամե-նայն ընկերութեան՝ սղալ համա-րին զքեզ, և նոքա ես՝ (կարծե-լով թէ ուղիղ լցես,) և գիտելով՝ թէ դու չերգես ըստ ուղիղ եղա-նակին, հաւատան թէ լցես կամ

չարաբնոյթ, և կամ ոչ բաւականապէս տիրուհի երգոյն՝ 'ի հաճել նովին զբարեկամ։

ԿԳ

Եթէ նուագիցես միաբան ընդ երգեցողի ուրուք՝ մի մոռանար, զի գործի քո դիտաւորեալ է յօգնականութիւն, և ոչ թէ յընդհատումն. և պահեա զգործիդ ստորադիր երգոյն։

ԿԴ

Եթէ բնութիւնն չէ տուեալ քեզ զձայն՝ մի նկրտեր յերգ անդր. միայն թէ բաւականին ճաշակ իցէ քո գիտութիւն և դատաստան՝ ծածկել զպակասութիւնս նորա ներդաշնակութեամբդ։ Եթէ երկար խառնեալ էիր յընկերակցութիւնս՝

տեսանէիր արդեօք թէ որչափ յաջողաբար կատարէր այս ։

ԿԵ

Կաքաւ

Հրաւէրք կաքաւելոյ կամերեկոյեան ընկերութեան՝ լիցի յանուն Տիկնոջն, և պատասխանիք այսպիսի հրաւիրանաց մակագրեացին առ նա ։ Բարոք հրաւիրանաց սովորաբար առաքին ՚ի տանէ մինչ երեքտասան աւուրբք յառաջ քան զհանդէսն ։

ԿԶ

Ժամք հասանելոյ հրաւիրելոյն զանազանին յիննէ մինչ ցերեքտասանն. յայսմ առաջնորդիլ հասանէ քեզ սովորութեամբ քոլորակին՝ յորում շարժիս ։

ԿԷ

Մ՛ի երբէք փութար ՚ի հասարակ հանդէս պարուց, և մի յաճախակի երևեր յայնպիսիս։ Երբ գնաս՝ ոչ է հարկ քեզ կաքաւել ՚ի ժամանակէ մտից ՚ի սենեակն անդր՝ մինչ երբ թողուցուս։ Եթէ արասցես այսպէս, թողուս ըզկնի քո զտպաւորութիւնն թէ՝ սակաւ պատեհութիւնս կաքաւելոյ ունիս արտաքոյ այնպիսեաց։ Պարտ է զմտաւ ածել ևս՝ զի վերոյ դիտողութիւնքս ոչ հային առ բարձրագոյն տեսակս հասարակաց պարուց, որք լինեն ընդ պաշտպանութեամբ ազնուականաց մերձ յերևելի գաւառական քաղաքս և ՚ի Լոնդոն։

ԿԸ

Եթէ Տան Տիկինն կամիցի կաքաւել, սովորական է նմա բանալ զպարն՝ պարագլուխ կանգնելով. եթէ տանուտէրն ոչ բանայցէ զայն ընդ բարձրագունին աստիճանաւ 'ի ներկայ տիկնայ ։

ԿԹ

Երբ պարոնն յատկապէս յանձն առարեալ՝ խնդրիցէ զպատիւ կաքաւելոյ ընդ քեզ, մի՛ հրաժարեր, եթէ յառաջագոյն զյանձնառութիւն ոչ ունիցիս ։

Լ

'Ի կարգաւոր հասարակաց պարս, որպիսիք օրինակի վասն՝ տուեալ իցեն յօգուտ անհատի ուրուք, կամ՝ առ բարերարութեան, փափագելի

է առնել զընկերութիւնն բաւականին մեծ՝ առ 'ի կացուցանել ըզքեզ անկախ զյանձնարութեանց տաճարապետին․ զի ընդդէմ ամենայն ջանից նորա անարգի ումանք մատչին յայսպիսիս ։ Երբ ընկերութիւնն իցէ այսպէս կարգաւորեալ՝ կարես դիւրաւ և առանց բրտութեան հրաժարիլ 'ի ծանօթանալոյ ումեք․ ասելով թէ արդէն իսկ խոստումն արարեալ ես, զի 'ի հարկէ այնպէս խոստանալ մարթ էր քեզ բարեկամաց քոց՝ յայնմ'երեկոյի ։

ՀԱ

Եթէ Պարոն ումն համարձակիցի հարցանել զքեզ առանց ծանօթութեան՝ զի կաքաւիցես ընդ իւր, 'ի հարկէ չպիտիս ընդունել ։ Հա-

գիւ թէ հարկաւ որ է մատակարարել սիրուն ընթերցողաց բառս ընդդի-մաբարս այսօրինակ բրտութեան , Բայց որովհետև ոմանք 'ի սիրուն սերէ ամուլ՝ մարթին հնարաւ որուք իւիք այսպէս զարմանալ մինչ ար-գեամբ ոչ մերժել զայն 'ի ժամուն , վասն որոյ թելադրեմք թէ մար-դոյն այնորիկ պարտ էր ունիլ ա-ռաւել քան թէ զհասարակ անպատ-կառութիւն , եթէ ոչ բաւակա-նանայր ասելով քով թէ , " նե-րեա ինձ Տէր · զի չունիմ զպատիւ ծանօթութեանդ ·" և մնաւ ած · զի զնախընթաց բրտութիւն պատժելոյ համար՝ հրաժարիլ պարտիս 'ի ծա-նօթանալոյդ : Այսպէս զխարդ և մա-հարար իցէ այս անհատին , հաս-տատ կայց 'ի վերայ· զի նա առաւել

և մեծարելոց է քեզ վասն այսպիսի ընտրութեանդ ։

ՀԲ

Ո մտաւ ած թէ՝ ընկեր քոյ լիցէ ՚ի ժամանակին ամենախոնարհ ծառայ քո․ և թէ պատիւ ինքեան համարիցի զի ջանել յոր և լիցէ կամս քո․ զոր օրինակ եթէ դու փափագիցես ցցուիլ, ձեռնել ՚ի միոյ սենեկէ ցմիւսն․ հաղորդել բարեկամաց քոց, կամ հայցել զպճղենիս դատառոյց, զզինս, կամ զոր և լիցէ միւս զուարթարարս ։ ՚Ի կարծոյ, զուցէ զգեստ քո խծծեալ լիցէ, պատիւ համարի նա իւր յընդունել զհրամանս քո առ այն, և պարտ՝ գուշակել միշտ զկամս քո վերնոյն ՚ի բազում այլ կարգաւոր դէպս ։ Մ՚ի, որ և լիցէ պատճառաւ երեւեր

միգալ առանձինն 'ի սենեկի կաքաւուցն ։

ՀԳ

Թո՛ղ կաքաւուդ լինել հանդարտ և անբռնավար ․ Թո՛ղ շարժումն 'ի պարու նկարագեսցի վայելչութեամբ յաւէտ՝ քան թէ գո՛րծականութեամբ շօշափելոյդ ։

ՀԴ

Երբ կաքաւիցես՝ համարեսջիր զքեզ երաշխաւորեալ ընկերի քում վասն որոյ արտօնութեան՝ մի՛ ուներ զքեզ ստոստալ 'ի մէջ պարաւորաց ․ կամ փոխս տալ զնա ընդ միւս պարոնաց ։ Այսպիսի գեղջկութե և անմտադրութեամբ՝ կորուսանէս զառանձին մտադրութիւն նորա ։ Աչ իսկ ամբառնան զքեզ արարքս այսպիսիք 'ի կարծիս ընկերութեն ։

ՀԵ

Մ՛ի երբէք խօսեր կամ ծիծա-
ղեր սաստկութեամբ 'ի հասարակաց
հանդիսի. զի փոխանակ լինելոյ այդ
նոցա հաւատալիք իմն ընկերահաշտ
հաղորդութեան քո ընդ լաւագոյն
մասին, ապացոյց լինին գեղջկու-
թեանդ, և առաւել ստոյգ նշան
վատթարագոյն սննդեանդ.

ՀԶ

Մատո՛ զմտադրութիւն պարուդ.
բայց մի՛ այսպէս նշանաւոր՝ մինչ
երևել թէ այն մտադրութիւն լեալ
իցէ 'ի սակս չառնելոյ սխալանս.
Ընդդանի եղանակն ներդաշնակա-
ւորէ ընդ տեսարանին, բայց 'ի պահ
պանել զայն՝ ո՛չ է հարկաւոր քեզ
սատտիկն լինել. Մաքրուի վարուց 'ի
կանայս՝ ունի զանպատուամնհիացութի.

ՀԷ

Մ՛ի վրէպ առնուր զերեւումն ընդ մաքրութեան . որ ոչ պակաս սխալ է քան թէ խառնակել զմո-լորութիւն ընդ առաքինութեան ։

ՀԸ

Մ՛ի առնուր զհասարակ բախ-Ճանապարհն ի տեսարան տանջանաց պարզամիտ պատանույն՝ որ գուցէ զարմանայցէ ի վերայ քո փոքր ինչ առաւել քան որոց պուր արժանի իցես ։ Ընդացուցանելով մեզէն ըղ-ձափուկ ակնկալութիւնս եւ զան-հաստատ անձկութիւնս ծագեալս ի նոցանէ բազում՛ անգամ՛ հանդարտ հանդիսական եղաք այսպիսի տեսա-րանաց՝ որպէս են վերոյ գրեալքդ ։ Մտաւ ած . զի յորժամ՛ վիրա-ւորես զայլոյ սիրտ՝ խաղ առնես

զգօմ իսկ առանձինն խաղաղու-
թեամբ ։

ՃԹ

Մի՛ երբեք Վալց ։

Ոչ հակառակի օրինաց քաղա-
քավարութեն, բայց ամենեւին ընդ-
դէմ է վայելչութեան ։ — Բարձ-
րագոյն ընկերակցութիւնն թողու,
այո՛, եւ պաշտպանէ իսկ զայդ ՝ սա-
կայն ամենայն մարդ ընդունի, զի
այս կաքաւ ոչ միայն կործանիչ է
վայելչութեան, այլ նաեւ բարոյա-
կանութեան ։ Չի՛ք անձն՝ որ տե-
սեալ իցէ զբազում ինչ յաշխար-
հի, այն է՝ որ հայեցեալ յաշխարհ
եւ տեսեալ տիրական եւ տիկնական
աչօք՝ ուրանալ կարիցէ թէ տեսեալ
իցէ զանբարոյականացուցիչ հետե-
ւանս այսր խենէշ ու խայտառակ

պարուց ։ Բանաստեղծք, քարոզիչք, և փիլիսոփայք դատապարտեալ են զայն. սակայն դեռ ցայժմ՝ ապաշնորհէ՛նա և զարքունիս ։ Ո՞չէս կամ՝ սովորութիւն հրատարակեալ ունի զայդ իբրև զուարճալի իմն, քանզի զգրգռութեամբ զորուն հրապուրի զգացութիւն մեռուցեալ երկոց անգործութեամբ ՚ի մշտնջենական ՚նստած կեանսն ։ Ընտրութիւն ծխելն կամ՝ սովորութեան ՚ի սակլի սորուն՝ առաւել աղէտ է քան բանաստեղծին, բարոյականին, քարոզչին. և փիլիսոփային ։ Ընթերցո՛ղ այսպէս երևի սա և քեզ. *

---

* Այս առարկայ երկար բացատրի ՚ի փոքրիկ Գործուածն անուանեալ " Քսակ Ծոցի Գիրք" քաղաքավարութեան Արթուր Գիլբիլենկայ ։

Զ

Խօսակցութիւն և Ճառասանք

Մշակեա՛ զմեղմ եղանակ ձայնի և զքաղաքավարի ոճ յայտարարութեան ։

ԶԱ

Զգուշութեամբ հեռացիր ՚ի ՚ի պատմելոյ յայսմ տան՝ զոր յիմարութիւնս կամ սխալանս և՛ լուեալ կամ տեսեալ իցես ՚ի միւսումն ։

ԶԲ

Մի՛ երբէք խօսեր ընդ օտարաց կամ լոկ ծանօթից ՚ի վերայ ընտանեկան հանգամանաց կամ հակառակութեանց ։

ԶԳ

Մի՛ հայեր ՚ի սխալանս՝ ՚ի վարս կամ բնաւորութիւնս բարեկամաց քոց ։ Քննիչն սիրէ ընդհանրա-

պէս հաղորդել զմիտս իւր կամ ըզ-գլուխս ․ յորում յառնէ բնաւո-րութիւնն զրպարտութեան ։

ՁԴ

Մի՛ երբէք քաջալերեր զձա-ռատանս կամ զրպարտանս , եթէ լսողք ոչ լինէին՝ այս չնչին ձայն ոչ տեւէր ․ մանաւանդ թէ բնաւո-րութիւն լսելոյ այսօրինակ շատա-խօսութեան փութով մղէ զքեզ բա-ժանորդ լինել հանգոյն կենցաղա-վարութեան ։

ՁԵ

Հրաժարեա՛ց ՚ի կատակաց ․ և զզուշաւոր կա՛ց ՚ի կիր առնելոյ նաև զառաւել ՚նուրբ ծաղրածութիւնս ։ Վերջինն խնդրէ զգուշութիւն միանգամայն և զկատարելութիւն ․ և մեծագոյն մասն ժողովրդոց առ-

նու զերգիծաբանութիւնն ընդ զուարճախօսութեան ։ Մ՛ին կարէ լինել ծնունդ մոլեկան , իսկ միւսն լուսաւորեալ և բարեսէր մտաց ։

ՁԶ

Մ՛ի երբէք վերացեալ՝ յորժամ անձն ոք խօսիցի ընդ քեզ · և մի երբէք չփոթեր զայլ ոք՝ սպրդելով զծանօթութիւն ինչ քո 'ի խօսս նորա ։

ՁԷ

Թ՛ող մտացդ լինել պատրաստ վասն խօսակցութեան , ոչ միայն կարդալով՝ այլ և խորհելովդ ։

ՁԸ

Հեռացիր յիմաստակութենէ և 'ի վարդապետութենէ · մի բնաբար հաստատ լիներ 'ի ստորասութեան կարծեաց քոց , Համեստութիւն

բարբառոյ , որպէս և վարուց՝ է բարձրագոյն զարդ կանանց ։

ՁԹ

Արկին անգամ՝ լսել , տաղտկալի է 'ի կին ոք , մանաւորաբար եւ՝ յորժամ կատարիցի 'ի ներկայութեան արանց ։ Ձեք մարդ ճաշակաւոր որ կարիցէ մեծարել զկին յանցաւոր յայդմիկ , և զմտաւ ած ․ զի Թէպէտև ստեղծանիցէ զծիծաղ՝ անհրաժեշտ յարուցանէ նաև զըզուանս 'ի միտս ամենեցուն՝ որոց կարծիք արժանիք են ստանալոյ ։ Մ՛իւս պատճառ վասն բարձման զորուն 'ի յարգելի յընկերակցութեանց որ զուցէ առաւել ազդոյ քան զոր և իցէ յառաջնոյն , է՝ զի ընդդիմանայ ընկալեալ սովորութեանց

յընկերակցութեա՛ն , և վճռաքար անտրինական է և գեղջուկ ։

Դ.

Յաւէտ լաւ լե՛ր քա՛ն թէ խօսեր զսնոտիս՝ եթէ ոչ ունիցիս զհաճոյական զայն արհեստ , զոր ունին ոմանք 'ի կանանց , զարդարել ըզփոքր ոչ-ինչս իւրեանց շարժմամբ իւիք շնորհաց և շահուց ։ Այս յաւէտ փափագելի արհեստ՝ յիրաւի շատ ցանկալի է 'ի տանտիկինն ոք , ըստ որում միշտ լնու զդատարկութիւն անհաճոյ լռութեանն , և ծառայէ որպէս զնախերգանք ինչ վասն ներածութեան 'ի նիւթ առաւել իմանալի ։

ԴԱ

Տիկին ոք պարտ է համապազ հեռանալ յորոց մերձենանն Ճա-

ռատութեան ։ Օ՛ բուցատրութիւն է զօրութիւն կանանց ․ մի՛ թողուր այդմ՝ այլափոխիլ ՚ի նեղիչ դասասացութիւն իմաստակի ուրեմն ։

ԴԲ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ։ Օ՛ կին ամուսնանալդ չէ պարտ քեզ պահել զբովանդակ նախընթաց ծանօթութիւնս քո ։ Այնոքիկ՝ որոց միայն դու առաքիցես զ․քարտս քո ․ համօրին առ յապայս ՚ի մէջ այցելու ծանօթութեանց քոց ։

ԴԳ

Ծնողք կամ՝ բարեկամք հարսին սովորաբար առաքեն զքարտս իւրեանց առ ընտանիս նորա ․ փեսայն ընտրէ զայնոսիկ անձինս ՚ի միջոյ նախկին ընկերաց իւրոց՝ զորս և՛ փափակի ունել այսպիսիս ։

ՂԴ

Բարոք ըստ մեծի մասին կապին ընդ իրեարս չերամօք, կամ ճերմակ ժապաւինօք, ըստ որում այդ զանազանէ զնորոգ ամուսնացեալ զոյգն ՚ի հասարակ այցելուաց։

ՂԵ

Յորժամ ամուսնացեալ՝ կարես թողուլ զքո կամ զքո առն քարտ ՚ի դարցուցանելդ զայցելութիւն. վերջինն լինի միայն, յորժամ՝ չունիցիս զքո իսկ քարտն։

ՂԶ

Զկնի ԸՆԴՈՒՆԵԼՈՅ զքարտ հասանեաց, այց ելցես երջանիկ զուգին. և թողցես զքոյն. և եթէ ծանօթանաս թէ ՚ի տան իցեն նոքա, միւսանգամ երթիցես։

ԴԷ

Օ կնի ամուսնութեան փեսային և այլն և այլն՝ սովորաբար թողուն զքաղաքն : ՚Ի գործի նոցա սովորութիւն է փեսային լինել ՚ի տան զքանի մի աւուրս վասն ընդունելոյ զայցելուս :

ԴԸ

Ծառայք :

Մ՛ի երևակայեր թէ դու առաւելուս զմեծութիւն քո ամբարտաւանութեամբ առ ծառայս քո՝ կամ այլոց :

ԴԹ

Մ՛ի բնաւ խստութեամբ խօսեր կամ հրամայեր ծառայից այլոց ուրուք . եթէ այս իցէ բնաւորութիւն քո՝ արժանաւորութիւնդ հանապազ լինի ՚ի վերայ սեպացեալ գահից ,

և ունի զբարձրութիւն իւր միայն 'ի համբերութեան նոցա ։

Ճ

'Ի տան բարեկամաց քոց համապազ յառաջաբանեա՛ զխնդիր քո առ ծառայն բանիւ քս "շնորհակալ լինելի զքէն վս̃ այսր իրի կամ՝ այնր ." և մի՛ մոռանար զամէօրական քաղաքավարութիւնն յընդունելը զայն։ Այս կարէ լինել առանց տեղի տալոյ թեթևագոյն ազատութեան կամ՝ մտերմութեան . և համապազ պատշաճի ազնիւ ծառայից ։

ՃԱ

Մ՝ի՛ երբէք մեղադրեր զծառայ առաջի բարեկամաց քոց . և եթէ դիպուածս ինչ պատահիցի մինչ դեռ 'ի Ճաշուն իցես , մի՛ երևեր ձանձրացեալ ։ Մ՝տածութիւնն՝ թէ փոք-

րեկ փեղեխոփայութիւն կարէ փո-
խարինել վնասուն պահպանու թբ
բնութեան քո, և անը՛նդհատու-
թեամբ ուրախութեան բարեկամաց
քոյ՝ առաջնորդէ առաւել ի ստա-
ցումն նորա ։ Մ՛ի թողուր բրտա-
գունին ի բերոս ծառայից յայտ-
նապէս զզուեցուցանել զքեզ ։

ԾԲ

Նամակագրութիւն ։

Ի մատուցանելդ գիր առ աս-
տիճանաւորս, հանապազ մարթ ա՛
զյարմար վերտառութիւնս, եթէ
լինիցի պարոնն գերակոյն ոք, կոմս,
և այլն և այլն ։ կամ առ Տիկնայս
նոցա ։ Եւ թէ պէտ ի պատասխա-
նել նոցա գրութեան քում՝ սկսա-
նիցեն՝ Տեառն կամ Տիրուհւոյ մե-
ծարանս, առ պարոնն կամ տիկինն

մի վարկիցես զընտանի բարբառն , յաղագս այնր , զի—

ԾԳ

Որ ի բնաւ վարեր զնչխար կընքոյ , (Վէֆըր.) զի զարշելի արտարողութի է՝ և բովանդակապէս մերժելի , եթէ անձինք կարիցեն զմտաւածել միայն զգործողութին ։ Այն այժմ այնքան պէս պէս զանազանութիւնք կնքամամց , և զինքն այնքան չնչինք են , մինչ չտալ պատճառանս հեռաւորութն այսր վայելուչ պարագայի ՚ի գրասեղանոյդ ։

ԾԴ

Հանապազ ծալեմ զտոմսակ յարգութեան , խնդրոյ , շնորհակալութեան և այլն՝ ՚ի պահարանի ։

ՃԵ

Ընդհանրական գիտողութիւնք

Մ՚ի երբէք սպրդեր զզուականս քո 'ի վերայ այցելուաց քոց, վասն զի որքան և զուարճալի իցեն սիրելիք մօրն, չէ պարտ 'նմա ակն ունիլ թէ ստեղծանիցեն զնոյն խանդաղատանս և՛ 'ի միտս բարեկամաց:

ՃԶ

Ոչ ինչ կարէ լինել այնքան զզուելի քան զբիրտ չարաճնունդ մանուկն 'ի դալհճի կամ 'ի ճաշատան:

ՃԷ

Յայտնագոյն նշան բարի սննդեն և բարի ճաշակի է զգայուն նկատումն թուացողութեան այլոց:

ՃԸ

Նագերէյն կամ (Պ.էն) Սուինքտ կարծեմ, նշանակէ՛ թէ բարի սը-

նուէրդն ոչ այնքան կայանայ 'ի մե-ծարանս առանձինն ձեռոյ . որքան 'ի բերել անդ զստացուածս մաքուր մտաց և Ճաշակաց 'ի վերայ սովո-րական պատահմանց աշխարհի ։

ճ՛Թ

Մ՛ի երբէք կոչեր զայր քո Պա-րոն Ա . կամ Պարոն Բ . զի այս է ռամկականութիւն իմն այնպէս պինդ հաստատեալ՝ մինչ յարատե-ւութիւն նորա եղծանէ զվարս ամե-նամաքուր վայելչութեան՝ եթէ կին ոք հնարաւորապէս յանցաւոր լիցի յայնմիկ ,

ճԺ

Թո՛ղ ծառայի քում տանել զափ-սէ քո առանձին՝ որ յօշիցէ զմիսն . մի՛ տար ինքնին 'ի ձեռս նորա . (զայս պարտ էր ասել 'ի գլուխ

Ճաշուն եւայլն ․) այլ զիմըդ և էջէ ներմուծանի աստ ։ Եթէ լինիցի ծառայ մի միայն ՚ի հասարակ չափու ընկերութեան՝ բաւական ժամանակ տայի նմա պաշտել բոլորին , եթէ մատչիւր էջէ և հասկանայցէ ըղ-գործս իւր ։

ՃԺԱ

՚Ի խօսել առ աստիճանաւոր անձինս մերժեա՛ զկրկնումն բառիցս Տէր իմ, կամ Տիրուհի։ Ընթացս խօսակցութեան զուրթ կալցես ա-սել , Տէրութիւն քո , Տիկնու-թիւն քո , յաճախ անձրեւելովդ զայն՝ ոչ միայն գեղջկական առնես զայն՝ այլ նաև զարշելի իսկ ։

ՃԺԲ

Օ մուսա՛ծ զի ամենայն մատն-կունք կոյր նախանձաւորութեան ,

և սահմանք առաքինութեանց սպարտին գոլ զարմանալիք, այլ անմերձենալիք 'ի տունս այլոց ։

ՃԺԳ

Եթէ 'ի հասարակ ճանապարհի բազմիցս պատահեցիս ծանօթից քոց՝ հարկ է ողջունել նոցա միայն յառաջնումն պատեհութեան ։

ՊՍԱԿ

им. А. Мясникяна

[illegible]

0 Hm